ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-46-Ո-109
2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՆԻՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետով և հիմք ընդունելով Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-13-Ո-24 որոշման հավելվածի 5-րդ կետը՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել Բարձրագույն դատական խորհրդի կնիքի նկարագրությունը՝ տեքստային և գծապատկերային տեսքով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ս. ՉԻՉՈՅԱՆ**

2019թ. հուլիսի 10
ք. Երևան

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
2019թ. հուլիսի 10-ի թիվ ԲԴԽ-46-Ո-109
որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՆԻՔԻ

Բարձրագույն դատական խորհուրդն ունի կլոր կնիք: Շրջանի կենտրոնում պատկերվում է ՀՀ զինանշանը, զինանշանի շուրջ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ» բառերը:

Կնիքի վրա պատկերված ՀՀ զինանշանի պատկերը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխությունների 21-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության դրոշի և Հայաստանի Հանրապետության զինանշանի ընդհանուր տեխնիկական պայմանները սահմանելու մասին» N 888-Ն որոշմամբ սահմանված պահանջներին:

Կնիքի տեքստը գրվում է հայերենով:

ԳԾԱՊԱՏԿԵՐ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՆԻՔԻ